

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳՈՎ ԿԼԲՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Կարբիի Երեքնուկ մանկապարտեզ» ՀՈԱԿ, որը գտնվում է ՀՀ Արագածոտն մարզ գ.Կարբի 3-րդ փողոց, 2 փակուղի, N 2 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀԱՄԿՀ-ԵՄ-ԳՀ-ԱՊՁԲ-21/01 ծածկագրով գնանշման հարցման «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ կետի 6-րդ մասի համաձայն/ արդյունքում 2021 թվականի հունվարի 08-ին կնքված N ՀՀԱՄԿՀ-ԵՄ-ԳՀ-ԱՊՁԲ-21/01 ծածկագրով գնման պայմանագրում 2021 թվականի փետրվարի 18 -ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթերի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Առկա ֆինանսական միջոցներ՝ «Կարբիի Երեքնուկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասով:

Փոփոխության նկարագրություն: Վճարման ժամանակացույցի, օրացուցային գրաֆիկի հաստատում:

Փոփոխության հիմնավորում: 2021 թվականի հունվարի 08-ին կնքված N ՀՀԱՄԿՀ-ԵՄ-ԳՀ-ԱՊՁԲ-21/01 ծածկագրով գնման պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Գևորգյանին:

Հեռ.՝ +37444201002

Էլ. Փոստ՝ [baghdasaryan@inbox.ru](mailto:baghdasaryan@inbox.ru)

Պատվիրատու՝ «Կարբիի Երեքնուկ մանկապարտեզ» ՀՈԱԿ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«08» ՀՈՒՆՎԱՐԻ 2021թ ԿՆՔՎԱԾ ՀՀԱՄԿԶ-ԵՄ-ԳԶ-ԱՊՁԲ-21/01 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿԱՐԲԻ ԵՐԵՔՆՈՒԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

h.Կարբի

«18» փետրվարի 2021թ

«Կարբիի Երեքնուկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Ա.Հայրապետյանի, որը գործում է ՀՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տիգրան Բաղդասարյան» Ա/Ձ -ն (հիմք ընդունելով 08 հունվարի 2021թ կնքված պայմանագիրը), ի դեմս «Տիգրան Բաղդասարյան» Ա/Ձ-ի տնօրեն Տ.Բաղդասարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ վաճառող), մյուս կողմից այսուհետև կողմեր, Ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ թվականի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 4-րդ կետի 18-րդ պարբերության՝ և 08.02.2021թ. կնքված N «ՀՀԱՄԿԶ-ԵՄ-ԳԶ-ԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 8.5 և 8.15 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 8.15 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

Կատարողը պարտավորվում է սույն համաձայնագրի N1 Հավելվածներով, նախատեսված ձևով և ժամկետներում կատարել նախատեսված «Կարբիի Երեքնուկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման (այսուհետև՝ պայմանագիր), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատակարարված ապրանքը և վարձատրել դրա համար:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով նախատեսված Պայմանագրի մնացած կետերը թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1, հավելվածը, համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ԳՆՈՐԴ

ՀՀ Արագածոտնի մարզի  
«Կարբիի Երեքնուկ մանկապարտեզ» ՀՈԱԿ  
ՀՀ Արագածոտնի մարզ գ.Կարբի 3-րդ փողոց, 2  
փակուղի, N2  
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» Աշտարակի մ/ճ  
ՀՎՀՀ՝ 54642343  
Հ/Հ 163203313008  
տնօրեն՝ Ա. Հայրապետյան

ՎԱՃԱՌՈՂ

«Տիգրան Բաղդասարյան» Ա/Ձ  
ՀՀ Արագածոտնի մարզ գ.Կարբի  
1 փ.4 նրբ.43 ա.  
Բանկ՝ «Ինեկոբանկ» Աշտարակ մ/ճ  
ՀՎՀՀ 54642343  
Հ/Հ 2051332048961001  
Տնօրեն Տ. Բաղդասարյան



Handwritten signature in blue ink above a dashed line, with the text '/ստորագրություն/ Կ.Տ' below it.













